

A GOOD
ADVERTISING
MEDIUM

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ
THE CITIZEN

THE ONLY
ARMENIAN
PAPER
Published in
California.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 10.

ՖԵՆՁՆՕ. ՔԱԼ. ՇԱՔԱԹ. ՀՈԿՏ. 18, 1902

ԳԻՆ 5 ՍԷՆԹ

Մեր Քաղաքական Ժողովը

— 0 —

Անցեալ Շաբաթ երեկոյ տեղի ունեցաւ Էտճըրի Հօլին մէջ մեր քաղաքական Ակըմբի հրապարակային ծանուցեալ Ժողովը, ուր հրաւիրեալ էին հանրապետական ատենախօսներ իրենց վարդապետութիւնները բացատրելու և հայ քաղաքացիներու քուէները խնդրելու համար: Ժողովին ներկայ էին 120ի չափ հայեր՝ երկու սեռէ բաղկացեալ: Ժողովին նախագահեց Ակըմբին ատենապետը՝ Պ. Յ. Սերոբեան, որ քանի մը խօսքերով բացատրեց անոր նպատակը:

Պատշաճ նուագածութենէ մը յետոյ՝ առաջին հայ ատենախօսը՝ Տքթ. Թիւֆէնկճեան խօսեցաւ կէս ժամի չափ, և ի մէջ այլոց ըսաւ թէ հանրապետականութիւնը կը նշանակէր ժողովրդին համար հարստութիւն, բարգաւաճում ու յաջողութիւն. իսկ ռամկավարականութիւնը՝ աղքատութիւն, մաքսի բարձում ու ընդհանուր անգործութիւն: Ատենախօսը զարմանք յայտնեց թէ՛ տակաւին Քաղաքիս մէջ կային յիմարներ որոնք Ռամկավարականաց քուէ տալ կը խորհին:

Երկրորդ ատենախօսն էր Ճ. Օ. Թրէյպըր՝ 60րդ նահանգաբաժնէն երեսփոխանի ընտրելին որ ըստ սովորականին՝ համառօտ նախաբանով մը գովեց հայ ժողովուրդը, զմայրեցաւ՝ անոնց բարեմասնութիւնները մատնանիչ ընելով, և ինքզինքը երջանիկ սեպեց՝ Հայոց խօսելու պատիւը ունեցած ըլլալուն համար: Ատենախօսը, Հայ տարրը Ֆրէզնոյի պարծանքը անուանելէ վերջ, բուն խնդրոյն անցաւ: Նման կուսակցական ուրիշ խօսողներու՝ չամիչն ու Քիլվըլընտը, մաքսն ու Մաք-Քինլի պիլը, իւր կուսակցութեան ուղիղ ընթացքն ու ռամկավարականաց սխալ ուղղութիւնը շնաց ասացուցանել, և համոզել հայ քաղաքացիները թէ իրենց շահը կը պահանջէր քուէարկել հանրապետականներու ընտրելիներուն համար:

Չինուորական հայ բժիշկ՝ Տքթ. Լօնկ քաղաքական ներկայ խնդիրներուն վրայ բան մը չի խօսեցաւ, այլ շնորհաւորեց հայերը քաղաքական գործոց մէջ գործօն դեր առած ըլլալուն համար, և իրատեց զանոնք ոյժ տալ քաղաքական Ակումբին:

Մ. Պ. Հարիս՝ Հանրապետականաց կեդրոնական յանձնախմբին ատենապետը, որ մօտաւորապէս ծանօթ է բոլոր Հայոց, ծափերու որոտումով մը ողջունուեցաւ երբ ատենապետը անոր անունը ծանօցց: Հարիսի նախաբանը գրուատական մ'էր Հայոց դամար, որով մատ-

նանիչ ըրաւ այն մեծ ծառայութիւնները զորս հայք մատուցած են այս գաւառիս՝ անոր բարգաւաճման և յառաջդիմութեան մեծ զարկ մը տալով: Հարիս բուն խնդրոյն գալով իր համոզիչ եղանակաւ երկու կուսակցութեանց գործերը բաղդատութեան դրաւ: Տինկլին ու Մաք Քինլին, մաքսն ու Թաքսը, Չամիչը, Թուզը, ընտրելիներն և ուրիշ յարակից պարագաներ իրենց մասն ու յարմար տեղը ունեցան Հարիսի խօսքերուն մէջ, որ հանրապետական վարդապետութեաց կը հաւտար սա միայն պատճառաւ թէ իւր կուսակցութիւնը չամիչի մաքսը բարձր կը պահէր. և որովհետեւ չամիչըն է, ըսաւ, այս գաւառի հարստութեան աղբիւրն, և անկէ առնել գործի և առևտուրի մարդ իր յաջողութիւնը կակնկալէ, ուստի և եւս անկէ կակնկալեմ իմ գործիս բարգաւաճումն ու յաջողութիւնը:

Խօսեցաւ յետոյ Տ. Մինասեան, որ շնորհաւորեց հայերն իրենց առած այս նոր քայլին համար:

Վերջի ատենախօսն էր Տ. Սէքլէմեան, որ նմանապէս զօրաւոր կոչ մը ըրաւ հայ քաղաքացիներուն՝ ի նպատտ նոյն կուսակցութեան: Պ. Սէքլէմեան ալ միւս ատենախօսներուն պէս չամիչն ու մաքսը չի մոռցաւ. Պրայնը, Լէյնը, Քիլվըլընտն ու բոլոր Ռամկավարականներն իրենց դատապարտութիւնը ստացան հայ ատենախօսին կողմէն որ յանչափս յափշտակուած կերէր հանրապետական վարդապետութիւններով: Եկաւ պարագայ մը յորում Ատենախօսը այնչափ յառաջ գնաց որ ռամկավարականներուն քուէ տուղները յիմարներ ու խենթեր անուանեց:

Ժամը տասն և մէկն էր երբ ատենապետը համառօտ վերջաբանով մը փակեց ժողովը՝ շնորհակալութիւն յայտնելով ատենախօսներուն ու բոլոր ժողովրդին որ ցրուել սկսեց սա հասկացողութեամբ թէ երկու շաբաթ վերջ պիտի գար դարձեալ լսել այս խնդիրներուն միւս կողմը, զոր քարոզող կուսակցութեան կողմէ զրկուած ատենախօսներ պիտի գային լուսաբանելու և ցոյց տալու հայ ժողովուրդին թէ Ռամկավարականները՝ երկու կուսակցութեանց աղատականը — հեռի խենթերով բաղկացած ըլլալու կարծիքին — կը նենկայացնէր Ամերիկեան ժողովրդի գրէթէ կէսը, և ունէր իր մէջ այնպիսի իմաստասէրներ ու խորունկ մշտամող գլուխներ որոնք ոչ միայն Ռամկավարականներէն ու Հանրապետականներէն՝ այլ աշարհիս բոլոր զարգացած դասակարգներէն կը յարգուին այսօր հաւասարապէս:

Գործադրուչները

— 0 —

Ածուխի հանքերը փակուած կը մնան ու մեծ գործադուրը կը շարունակուի տակաւին. Անցեալ շաբթուան մէջ շատ մը փորձեր եղան խնդիրը հասկացողութեան մը բերելու համար, բայց անկարելի եղաւ ածուխի իշխանները հաճեցնել: Աստիք կը յամառին տակաւին, և կը թուի թէ պայքարը պիտի շարունակուի, ու տեղացի աղքատը Անգղիայէն բերուելիք ածուխի վրայ պիտի դնէ իր յայտը: Վերջի հեռագիրները կը ծանուցանեն թէ գործաւորք սկսած են արդէն նիւթական անձկութեան մէջ ինչպէս: Ամերիկեան գործաւորաց Ընկերութիւններու Գաշնակցութիւնը (Ամերիքըն Ֆէտէրէշըն օֆ լէյպըր), որ երկու միլիոն բանուոր կը ներկայացնէ, և որոյ կեդրոնն է ի Ուաշինկթըն, անցեալ Շաբաթ օր բաց նամակաւ մը դիմում ըրաւ ընդհանրութեան՝ անոր նիւթական ու բարոյական օգնութիւնը խնդրելու ի նպաստ ածխագործ բանուորներուն: Նամակը մատնանիչ կընէ ածխատեսաց անիրաւ պահանջը և անոնց յախուռն ընթացքը հանդէպ հազարաւոր անպաշտպան գործաւորներու, և կը բառնայ ամեն պատասխանատուութիւն այս խտտապահանջ խմբին վրայ: Գովեստիւք կը խօսի գործաւորաց առաջարկի մասին, որ էր՝ ամեն խնդիր Նախագահին և անոր կողմէ ընտրուած յանձնախմբի մը թողուլ: Նամակը կը խնդրէ ընդհանուր ժողովրդէն նիւթապէս օգնել այս գործաւորներուն, որպէսզի կարողանան իրենց այս արդար կուռին մէջ՝ յաղթող հանդիսանալ: Գաշնակցութիւնը հետեւեալ թերազրութիւնները կընէ.

1. Ամեն քաղաքի մէջ խանութպանք, արուեստաւորք ու պաշտօնեայք նպաստամատոյց յանձնախմբեր կազմեն ու դրամ հաւաքեն:
2. Ամեն գործաւոր երկուշաբթի օրերը՝ առուօտեան ժամը 10է մինչև 11 աշխատի՝ և այդ ժամի մէջ շահածը յատկացնէ հանքի գործաւորաց: Այդ որոշեալ ժամը անուանուի 'հանքագործներու ժամ':
3. Եկեղեցական ամեն պաշտօնեայ՝ առանց յարանուանական խորութեան՝ կիրակի օրերը դիմում ընէ քարոզի միջոցաւ իր ժողովրդի գթութեան ու անոնց նիւթական նպաստներն հաւաքէ այս նպակտախ համար:
4. Ընդհ. մամուլը հանգանակութիւն բանայ:
5. Նուագահանդէսներ ու երեկոյթներ սարքուին ի նպաստ այս բանուորներուն:

Գաշնակցութիւնը կը խնդրէ որ այս դրամները զըրկուին Ինտիանապօլիս՝ Հանքագործներու ընկերութեան գանձապետին:

Լաւ գաղափար մը չէ՞ յանուն Ֆրէզնոյի հայ գաղթականութեան դրամական օգնութիւն մը հասցնել այս աշխատաւորներուն:

Գործաւոր դասակարգի և գործաւորական ընկերութեանց համակրանքը շահելու սքանչելի միջոց մ'է այս:

* * * * *

Քաղաքիս 'Փակինք Հաւըներու' Գործաւորներն ալ անցեալ շաբաթ օր գործադուր ըրին: Փըսիֆիք Քօսթ Ընկերութեան գործաւորները ներկայացուցչի մը մի-

ջոցաւ փոքրիկ յաւելում մը պահանջեցին իրենց օրականներու վրայ: Ընկերութիւնը մերժեց այս խնդիր, ու գործաւորք դադրեցան գործելէ, և անմիջապէս ժողով մը կազմեցին, ուր գործաւորական նոր ընկերութիւն մը կազմուեցաւ: Այս Ընկերութիւնը անցեալ Շաբաթ երեկոյ ընդհանուր կող մը ըրաւ քաղաքիս բոլոր 'փաթինք հաւգերու' բանուորներուն՝ ներկայ ըլլալ նոյն երեկոյ տեղի ունենալիք ժողովի մը, ոչ շատ քաջալերական եղաւ, և ուր շատեր ալ անգամակցեցան ընկերութեան: Երկուշաբթի օր գործադուրը ընդհանրացաւ, ու բոլոր մնացեալ տուններն ալ մասամբ գործերնին դադրեցուցին: Նոյն օր գործաւորք մեծ թափօր մը կազմեցին ու չրջեցան քաղաքիս փողոցները՝ նուագածուաց խմբի մը առաջնորդութեամբ: Հազարէ աւելի գործաւորք ու գործաւորուհիք մաս առին այս թափօրին մէջ:

Լրագիրս մամուլոյ զրկուած ժամանակ դեռ համաձայնութիւն մը գոյացած չէր երկու կողմերուն միջև: Գործաւորք, որոց թիւը կաւելնայ ամեն օր, կը հաւատան թէ գործատիարք տեղի պիտի տան քիչ ժամանակէն, վասնզի գործերու այս ստիպողական օրերուն մէջ կարելի չէ անոնց համար երկար ատեն զիմանալ:

Այս գործադուրին մէջ գործաւորաց պահանջն է 25 սէնթի յաւելում մը իրենց օրական վարձքին վրայ:

Քաղաքական մեծ հանդես Հայոց Ի ՔԹՅԵՐ ՀՈՒ

Թաւաղկայ Շաբաթ կիրակուն, Հոկտ. 25, ժամը Տին Բըթնըր Հօլին մէջ հայ քաղաքացիներուն մէկ հանդէսը տեղի պիտի ունենայ, ուր ներկայ քաղաքական պայքարին նկատմամբ ասեղանախօսութիւններ պիտի ըլլան և մասնաւորապէս Նամակաւորականաց քաղաքականութիւնը պիտի պարզուի: Ամերիկացի ասեղանախօսները պիտի ըլլան ի մէջ այոց Մայքս Վալիս, Տէնվըր Բ. Չըլչ, Կեղզոնական Յանձնախմբի Նախագահը Մ. Փոսթ և ուրիշներ: Նուագածուաց խումբ մը ընտիր կարգներ պիտի նուագէ այս ժողովին մէջ: Քանի մը հայ տիկիներէր խնդրուած է գալ նաև ի վրայ նուագել այդ երեկոյ և կը յուսանք որ պիտի ընդունին մեր այս խնդիրը:

Բոլոր Հայերը թէ՛ ամերիկեան քաղաքացի ըլլան թէ ոչ ինչ պէս նաև հայ տիկիները կը հրաւիրուին յարգանքօք ներկայ գտնուի այս կարևոր ժողովին ու հանդիսին, ի դիմաց Փ. Հայ Քաղաքական Ակօբին Պրէզիտ, Հոկտ. 14, 1902

Ատենապետ
Ս. Մ. Սերոբեան
Հ. Է.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔՅԻԻ տպարանին մէջ կը տպուին ամեն տեսակ Հայերէն և Անգլիերէն գործեր՝ Այցետոմս, նամակադուր, պահարան, հարսանեկան ծանուցագիր և տետրակներ գոհացուցիչ գներով:

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

—0—

Հասարակ գիտակցութիւնը կարելի չափն է. փորձառութեան ու փորձի միացումն ու կեանքը սերտաժ ըլլալու լաւագոյն ապացոյցն է այն:

—Վիճակդ մի անարգեր, վասն զի անոր մէջ պիտի ապրիս, անոր մէջ պիտի գործես ու յաղթես: Գիացիր թէ աշխարհիս ո՛ր և է մէկ կէտէն երկինքն ու անհունը մի և նոյն հեռաւորութիւնը ունին:

—Սորվեցնելով է որ մարդս աւելի կը սորվի, մատնանիչ ընելով է որ խորունկը կը տեսնայ, հաստատելով է որ կը քննէ և գրելով է որ կը խորհի:

—Մարդիկ կը հասկնան այն բանը միայն որուն ըսկզբնաւորութիւնը իրենց մէջ ունին արդէն:

—Դատել կը նշանակէ յստակ տեսնել, ճշմարտութիւնը գտնելու հետամուտ և անկողմնակալ ըլլալ: Անշահախնդիր լինելով անհատականութիւնը մոռնալը թերեւ լաւագոյն սահմանն է այս մասին:

—Քարեկամի մը օգնել անոր նեղութեան ժամանակ՝ պարտականութիւնն է մարդուս. բայց հարկ է երբեմն չըջահայեաց ըլլալ, վասն զի շատ անգամ քարեկամի մը զրամ փոխ տալով թէ՛ զրամդ և թէ՛ քարեկամդ միասին կը կորսնցնես:

—Նշմանեցնելիք մէջտեղը կրնաս գտնել նոյն սենեակին ամենէ մաքուր օդը:

—Քարայլ կըսէ թէ սուտը էշի մը կը նմանի որ օրին մէկը իր ականջները ցոյց կուտայ անշուշտ:

—Սիրոյ զօրութիւնը չի գիտցող կամ զայն չը՛գգացող մարդը անգործածելի կամ անգործագրելի մի զօրութիւն է, և կը նմանի կայծքարին որ պողպատի մը հպումին կըսպասէ իւր կայծերը երևան կրնալ բերելու համար:

—Պահուած ձիւքը ենթադրութիւն մ'է. ինչ որ կըրնայ գոյութիւն ունենալ՝ ստիպուած է կերպով մը յայտնել ինքզինքը. ինչ որ ի յայտ չի գար՝ ոչինչ է:

Մայրը — Սուրէն, այս երեկոյ հօրեղբայրդ մեզի հետ պիտի ընթրէ. չըլլայ որ անոր մազերուն վրայ ո՛ր և է գիտողութիւն ընես:

Սուրէն — Շատ աղէկ, մայրիկ:

Սուրէն — (երեկոյին՝ սեղանին վրայ) Մայրիկ, դու պատուիրեցիր որ հօրեղբորս մազերուն վրայ դիտողութիւն չընեմ՝ բայց հօրեղբորս գլուխը բնաւ մազ չի կայ:

Մ Ա Ն Բ Ա Ղ Ո Ի Բ Ե Բ

—0—

—Անցեալ Զորեքշաբթի երեկոյ Օփէրա Հաւրին մէջ տեղի ունեցաւ Հանրապետականաց ընդհանուր մէկ ժողովն որուն մեծ բազմութիւն մը ներկայ էր՝ Լսելու համար նոյն կուսակցութեան Նահանգապետի

ընտրելին՝ Տքթ. Գ. Ս. Փարտի, և ուրիշ ատենախօս մը յանձին Տ. Մէք Քինլիի ժողովը բաւական յաջող եղաւ՝ Հանրապետականի մը տեսակէտէն նայելով:

Այս ժողովոյ նախագահէց Ծ. Է. Քուք: Փոխ կամ պատուոյ նախագահներուն մէջ էին հետեւեալ հայերը. Տքթ. Բարսեղեան, Միսաք Նշիկեան, Յարութիւն Եանըզեան, Յ. Առաքելեան, Ա. Քրահեան և Ս. Հ. Գաղանձեան:

** Յառաջիկայ Շաբաթ երեկոյ Քըթնըր Հօլի մէջ տեղի ունենայիք հանդէսն ու ժողովը տեսնալու և խօսողները բերու ես անշուշտ:**

—Այս երեկոյ տեղի կուեննայ Պատ. Քարահատեանի սան մէջ նշանագրութեան հանդէսը Տ. Մ. Շահպաղեանի ընդ Օր. Վիրգինէ Քարահատեանի: Նշանագրութեան կրօնական մասը պիտի կատարէ Տքթ. Մելգոնեան:

—Տքթ. Լօնկ՝ Ալքաթրադ կղզիի հայ դինուորական բժիշկը որ ժամանակէ մը ի վեր քաղաքս կը գտնուէր, իր պաշտօնատեղին վերադարձաւ անցեալ Երկուշաբթի:

—Մ. Մինասեան, որուն համար ժամանակ առաջ ըսուած էր թէ Ծրէզնոյ գալու դիտաւորութիւն ունէր, անցեալ շաբաթ օր քաղաքս հասաւ:

** Գործերդ այնպէս կարգադրէ որ ամսոյս 25ի երեկոյին ներկայ ըլլաս ի Քըթնըր Հօլ:**

—Յ. Առաքելեան որ ձմերուկի գործով երկար ատենէ ի վէր Սան Ծրանահսիօ կը գտնուէր քաղաքս վերադարձաւ իր Տիկնոջ հետ միասին:

—Նոյեմբեր 10ին Տիկին և Պարոն Զ. Յ. Եղեֆեան մանչ զաւակ մը ունեցան:

—Պրք. Սէրայեան և Շահպաղեան, հայ գծագրիչք, քաղաքս եկան՝ շաբաթ մը մնալու համար:

—Ք. Սանտարեան՝ Սաքրամէնթօ Պանքէն քսան արտավար այգի գնեց 1600 տոլարի:

** Յառաջիկայ Շաբաթ երեկոյեան ժողովը չըլլայ որ մոռնաս: Եկուր ու բարեկամներդ ալ բեր: **

Մ Է Թ Ի Ր Ա Փ Օ Լ Ի Թ Ը Ն

ԿԵՆՍՅ ՍՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐ Գ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ, Գործիչ. Լօն էնա Սէյվինկ Պէնք Պիլտինկ. Սենեակ, 15 և 16 Փ. Օ. Պաքս, 1285: Թէլէֆօն, պլու 216

Կենաց ապահովագրութիւնը ամեն մարդու համար անհրաժեշտ պէտք մըն է՝ մանաւանդ ընկերական ներկայ զրութեան մէջ: Այն որ իր ընտանեաց ու զաւակաց ապագան կը խորհի, չի կրնար իր պարտականութիւնը կատարել առանց իր կեանքը ապահովագրելու: Բայց ապահովագրութիւնը մահուրէն վերջ չէ միայն որ կը վարձատրէ ապահովագրելոյն փախաբք: Երկարակեաց մարդիկ մահուրէն տուջ կը վայելին անոր բարիքները, ու ծերութեան ատեն պատրաստուած ապագայ մը կուենան: Նորէն կը գրենք այս մասին:

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

ՇԱՐԿԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի թիւ 1033

ՃէՅ Փողոց, Էքսփոզիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի Համար Տարեկան մէկ ու կէս Տոլ. — Վեցամսեայ 75 Սէնթ Ուրիշ երկիրներու Համար

Տարեկան 10 Ֆրանկ — — Վեցամսեայ 5 Ֆրանկ Բաժանորդագիրը Կանխիկ Վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ դրամ կը ղրկուին Խմբագրութեան հետեւեալ հասցէիւ՝

To The Editor of

THE CITIZEN

Fresno, Cal.

P. O. Box 1224

THE CITIZEN

The Only Armenian Paper Published in the State of California.

H. EGUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year..... \$1 50 | Six Months.....75 Cents

ՅՐԷՋՆՕ, ՔԱԼԻՖՕՐՆԻԱ. ՀՈԿՏ. 18, 1902

Քաղաքացիին ընդարձակելու համար տպագրական ամեն դիւրութիւններ թէև ունինք հիմայ, բայց զրաշար մը տակաւին չի գտած ըլլալուս համար՝ ստիպուած ենք շարաթաթերթս պահել իր ներկայ դիրքին մէջ քիչ մը ժամանակ ևս՝ մինչև որ յաջողինք ձեռք ձգել մնայուն ու կարող աշխատաւոր մը որուն, մեծ պէտք ունինք: Աւելորդ է ըսել թէ տեղւոյ անցկութեան պատճառաւ ստիպուած ենք յօդուածները կարելի եղածին չափ համառօտել, և շատ անգամներ ալ դուրս թողուլ ինչ որ կարևոր էր ունենալ թերթիս մէջ: Տեղական այս գծուարութիւնները աչքի առաջ ունենալով՝ ընթերցողք կը յուսանք որ ներողամիտ կը գտնուին այս մասին, և քիչ պահանջկոտ:

—0—

Տիրոջ Մանուկեան կը դատուի՝ Տէր Միքայելեանը սպաննած ըլլալու ամբաստանութեամբ: Ընդհանուր Գատախազը չէ միայն որ անոր գլուխը կը պահանջէ, այլ կայ հայ խումբ մը որ յանձն առած է ամէն նիւթական գոհողութիւն ընել՝ այդ անձը կախել տալու համար: Այս խումբը մինչև հիմայ գաղտնի կը գործէր, բայց այժմ սկսած է ինքզինքը ցոյց տալ տեսնելով այն մեղմացուցիչ պարագաներն ու ամբաստանելոյն յանցանքին բնութիւնը որք մահաստուեր կախազանէն զայն կը հեռացնեն յամբարար: Այս մասին կանուխ է տակաւին կարծիք յայտնել կամ մանրամասնութեանց մտնել, բայց աւելորդ չենք սեպեր ըսել այժմէն թէ ճշմարտութենէ հեռու չէ արեւելեան առածը թէ "յանցանքը սպաննողին չէ, այլ մեռնողինն է ընդհանրապէս": Սպասենք գատավճռին:

ՇՈՒՇԱՆԸ

—0—

Թող դան, շուշան, շուրջը նստին
Երկնից անմեղ թռչնիկներ,
Թող երգեն քեզ երգեր անուշ,
Թող յերիւրեն ներբողներ:

Երբ արեւը գայ սպառնայ,
Շուշան սիրուն, նեղել քեզ,
Ձիւնի նման ճերմակ դէմքդ
Այրել տապել հրակէզ,

Թող թռչուններն երամ երամ
Օգնութեան գան քեզ փութով,
Թող թեւերնին բանան վրադ՝
Շուք տան քեզի թարմ ու զով:

Թող արևի տապին տռչե
Պաշտպան կանգնին քեզ թռչունք,
Մինչև արևն անցնի երթայ
Ննջել ի տարն արևմուտք:

Թող քու շուրջը պարեն յայնժամ
Վաստակարեկ այդ թռչնիկք.
Յօղն ալ կաթէ՝ զով տայ սրտիդ,
Ով քաղցրագէմ հայ ծաղիկ:

Բայց, թռչնիկներ, հեռի գացէք,
Իմ Շուշանիս մի՛ գաք մօտ.
Նա պէտք չունի պաշտպանութեան,
Ձի չի աններ տապն ու սօթ:

Թէ թշնամին մօտ գայ անոր՝
Ինձ կը գանէ հոն արգէն,
Տօթ ու կրակ երբ ալ հասնին
Ձիս չեն բաժներ իր քովէն:

Իմ թեւերս անոր վրայ
Կը տարածուին հովանի,
Իմ ծաղիկս, սիրուն թռչունք,
Ձեր օգնութեան պէտք չունի:

Բայց թէ սուկայն ես տարածամ
Մեռնիմ, մնայ իմ Շուշան՝
Այս կեանքիս մէջ անտէր, անոք,
Անմխիթար, անպաշտպան՝

Յայնժամ եկէ՛ք, ո՛վ թռչնիկներ,
Դուք տէր եղիք իմ Մաղկին.
Պաշտպանեցէ՛ք զայն շարին դէմ՝
Մինչև իմ քով գայ յերկին:

Բայց քանի որ ես կապրիմ հո՛ս
Իմ Շուշանէս բաց կեցէ՛ք.
Ձեր ծաղիկը պաշտպան չունի,
Գացէ՛ք դուք զայն հսկեցէ՛ք:

Տիգրան Մանուկեանի Դատը

Տիգրան Մանուկեանի դատը, ինչպէս որ ծանուցած էինք կանխաւ, սկսեց տեսնուիլ անցեալ Զորեքշաբթի օր՝ զաւտակաւն Բարձրագոյն Դատարանին մէջ՝ դատաւոր Օսթրնի առջև:

Որոշեալ ժամանակէն առաջ դատարանի մեծ սրահը լեցուած էր բազմութեամբ, որուն մէջ Հայք զԸԽաւոր տեղը կը բռնէին:

Ժամը 10ին ամբաստանեալը դատարանը բերուեցաւ, որոյ դէմքին վրայ բանտարկութեան սովորական հետքերը ակներև չէին տեսնուիր: Չայն չի ճանչցող մէկը բնաւ չէր կրնար կարծել թէ Մանուկեանն էր այն, զի՝ փոխանակ խորունկ տխրութեան ու մտատանջութեան մէջ ըլլալու, որ բնական է այս օրինակ պարագաներու տակ, կատակերգութիւն մը տեսնելու գընացող մէկու մը նման՝ կը ժպտէր թեթևաբար, և այնպէս մը կը թուէր թէ Մանուկեան չէր ըմբռնէր երբէք այն ծանր վիճակը որուն ենթարկուած էր ինքը: Սա տարօրինակ երևոյթը տեսնողները՝ ամբաստանեալին անտարբերութիւնը անկասկած խելագարութեան կը վերագրէին: Տեղական մամուլը մի նոյն կարծիքը կազմած է այս մասին:

Ամբաստանեալը կը ներկայացնէին այս դասին մէջ Ութըր Թըբըր և Ֆրանք Քօքի, իսկ հակառակ կողմէն կը ներկայանային Գաւառական Ընդհանուր Գատախաղ Տ. Էտլըրթս, Ֆրանք Շօրթ և Ֆ. Է. Քուք:

Դեռ կարելի եղած չէ թէ և ստուգել թէ ո՞վ վարձած է այս վերջի կարող փաստաբանները՝ ամբաստանելոյ դէմ եղած ծանր ինչիւրը աւելի ծանրացնելու համար, բայց հասարակաց կարծիքը մատնանիչ կրնէ այս մասին Յարութիւն Ռատիկեանին, որ Մանուկեանի ձեռքով վիրաւորուած անձն է՝ Տէր Միքայէլեանի զարնուելէն անմիջապէս առաջ:

Զորեքշաբթի օր՝ մինչ ժամը երկուք հազիւ կարելի եղաւ Երզրուեանները (ճիւրին) ընտրել: Այս ընտրութենէն անմիջապէս յետոյ դատը սկսեց: Գատախաղութեան կողմէ հրաւիրուած առաջին վկան էր Տքթ. Տէյվիթսըն, որուն վկայութիւնը կը կայանար սպաննուած երիտասարդի ընդունած վէրքերու նկարագրութեան ու կարգ մը յարակից պարագագերու մէջ:

Երկրորդ վկան էր Ա. Ատուրեան որ շատ ձախող քննութիւն մը տուաւ: Սա՝ ուղղակի հարցաքննութեան մէջ պատմեց թէ ինչպէս ամբաստանեալը կրակած էր նախ Ռատիկեանի և ապա սպաննուածին վրայ, ու նըկարագրեց կարգ մը մանրամասնութիւններ: Սակայն անուղղակի հարցաքննութեան մէջ հակասեց ինքզինքը ու նեղ պարագաներու մէջ բռնուեցաւ շատ անգամ:

Հինգշաբթի օր քննութեան ենթարկուեցաւ նախ Ֆրանք Մարթըն անուն Ամերիկացի պատանի մը որոյ պատասխանները, բացի կարևոր հակասութենէ մը, յրատակ էին և ընդհանրապէս ամբաստանելոյն աննպաստ: Կ. Թիւթիւնճեան թարգմանի մը՝ Պ. Սէքլէմեանի միջոցաւ պատմեց իր տեսածները որք՝ քիչ տարբերութեամբ՝ նոյն են միւս վկաներու պատմածներուն հետ:

Ահաւաստիկ ասոնց պատմութիւնը: Յուլիս 4ի երեկոյին Ռատիկեան կեցած է եղեր Տէր Միքայէլեանի խանութիւն մօտ՝ սեղանի մը առջև, որուն վրայ ըմպելիներ ևն. դրուած կան եղեր ի վաճառ: Տէր Միքայէլեան՝ քիչ մը անդին՝ իր խանութի դրան առջև կը կենայ եղեր այս պահուս: Ամբաստանեալը կուգայ 'սօտա' մը կը խմէ, ու դրամը գրպանէն հանելու պատրուակաւ՝ տարճանակ մը դուրս կը բերէ անկէ: Ռատիկեանի կրունակը այս պահուս դարձած է եղեր ամբաստանելոյն, որ առանց բառ մը արտասանելու՝ կը կրակէ նախ Ռատիկեանի վրայ, ու կը ձգէ զայն, յետոյ երկիցս կը կրակէ սպանեալին, և ապա կը փորձէ անձնասպան ըլլալ՝ երկու անգամ իր գլխէն վեր կրակելով:

Թիւթիւնճեան անուղղակի հարցաքննութեան մէջ չափազանց շփոթեցաւ ու հակասեց ինքզինքը շատ մը անգամներ:

Աննա Ճանսըն, Ռատիկեանի քեռորդին՝ զեռաստի աղջիկ մը, մանրազնին քննութեան ենթարկուեցաւ՝ մանաւանդ ամբաստանելոյ փաստաբաններու կողմէն: Աննա ևս քանի մը հակասութիւններու մէջ բռնուեցաւ:

Վկայեց նաև Ճիւլիա Ճանսըն՝ Ռատիկեանի քոյրը որուն պատմութիւնը թէ և նոյն՝ գլխաւոր կէտերուն մէջ, բայց հարցաքննութեանց միջոցին չի կարողացաւ հակասութիւններէ ազատ մնալ:

Քանի մը ուստիկաններու երկրորդական կարևորութիւն ունեցող վկայութիւնները առնուելէ վերջ՝ Տքթ. Րլաուը ի մէջ այլոց ըսաւ թէ՝ գիտցուած պարագաները ի նկատի ունենալով՝ չէր կրնար բացատրել այն վէրքը զոր գտած էր Մանուկեանի ձախ ականջին վըրայ: Կարևոր յայտարարութիւն մ'էր այս որ կրնար խնդրոյն տարբեր գոյն մը տալ:

Չալի Ճանսըն՝ Ռատիկեանի քեռորդին ևս հակասութեանց մէջ ինկաւ ու շատ մը անբնական յայտարարութիւններ ըրաւ:

Նոյն օրուան վերջի վկան եղաւ Յ. Ռատիկեան, որ պատմեց թէ ինչպէս ամիսներ առաջ ամբաստանելոյն հետ կռիւ մուսնեցած ու զայն սալահատակին վըրայ ձգած էր կիտակեռ վիճակի մը մէջ:

Ռատիկեանի հարցաքննութիւնը լմնցած չէր երեկոյեան ժամը 5ին երբ դատարանը գոցուեցաւ:

Նկատելով որ այս խնդրոյն հայ վկաներէն շատեր անտեղեակ են օրէնքի ինչ ինչ տրամադրութեանց՝ մեզ պարտք կը սեպենք յիշեցնել թէ այս օրինակ դատերու մէջ սուտ վկայութիւն տուող անձ մը խիստ ծանր պատիժներու կենթարկուի: Քալիֆօրնիոյ օրէնքը սուտ վկայի մը համար երկարատե բանտարկութեան և մահու պատիժ տնօրինած է: Սուտ վկայ մը մահուան կը դատապարտուի այն պարագային միայն երբ անոր վկայութիւնը ուղղակի պատճառ ըլլայ անմեղ անձի մը կախաղան բարձրանալուն:

Այս անդեկութիւնները կուտանք մասնաւորապէս ասոնց օգտին համար որք յանձն կառնեն կամ կը խորհին յանձն առնել բարեկամութեան կամ տարբեր պատճառի մը համար ճշմարտութիւնը պահել:

Ընտիր կերակուրի համար գևա

ՍԻԹԻ ՊԷՅՔԸՐԻՆ

— ձ. Մ. Քոհար և Փիքֆորթ, ճաշարանատարք —

1138 ԱՅ Ըսթրիթ, Ֆրէզնօ, Քալ.

ԱՆՇԱՐԺ ԿԱՂՈՒԱԾ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳԻՐՈՒԹԻՒՆ

— 0 —

Մեզի հետ գործ ունեցող ո և է Հայու հարցուր և տես թէ մեզմէ գոհ եղած չէ՞: Մենք Հայոց աւելի շատ կալուած կը ծախենք քան միւս բոլոր գործա- կալութիւնք ի միասին առնելով: Եկ և մեր ունեցած Այգիներու, Ծառաստաններու և ուրիշ ամեն տեսակ կալուածներու գները լսէ:

Մօր Եւ Նիս

1150 Ա. Փողոց. Ֆրէզնօ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՎՅՈՒՄ

— 0 —

Ազգային Հոգարարձութեան խնդրանք՝ յառաջի- կայ Նոյեմբեր 9ի Կիրակի օրը, կէս օրէ վերջ, ժամը երկուքին Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Ընդհանուր Ժողովը արտաքոյ կարգի նիստ պիտի ունենայ նոյն Եկեղեցւոյ մէջ՝ կարգ մը կարևոր խնդիրներ լուծելու համար: Ի մէջ այոց ժողովին պիտի ներկայանայ Առաջնորդի ընտրութեան առկախ խնդիրը:

Կը խնդրուի բոլոր անդամներէն ներկայ լինիլ ան- հրաժեշտ այս կարևոր ժողովին:

Ի Դիմաց Ընդհ. Ժող. Ս. Երր. Եկեղեցւոյ Ատենադպիր

Մ. Ալեմեան

Յ. Գ. Ամեն անոնք ուր տակաւին ստորագրած չեն Եկեղեցւոյ կանոնադիրը, կը հրաւիրուին ընդ փոյթ ստորագրել զայն՝ սրպէսպի ձայն ու քուէ ունենան ներկայ կարևոր խնդիրներու մէջ:

Ֆրէզնօ, Հոկ. 2 1902

ԱԶՔԱՅԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ

— 0 —

Ամեն Կիրակի օրեր ժամերգութիւնք կըսկսին ա- ռաւօտեան ժամը 9.30ին: Քարողի ժամն 11.

Երեկոյեան դասը՝ կէս օրէ վերջ ժամը 3ին:

ՀԱՅ ԵՐԻՅԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

— 0 —

Ճէյ և Սանթաքլարա փողոցներուն անկիւնը: Ամեն Կիրակի առտու ժամը 10ին Կիրակնօրեայ դպրոց և կեսօրէ ետքը ժամը 3ին Հայերէն քարող կըսայ:

ԾԱՆՈՒՅՈՒՄ ՉԱՄԻՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՅԳԵՊԱՆՆԵՐՈՒՆ

— 0 —

Ընկերութեան պատկանող այգեպանները հետեւեալ կանխավճարները պիտի ստանան.

Իմփէրիւլ քլըսթըր,	փաւնտին	5	սէնթ
Տիհէշա քլըսթըր	"	5	սէնթ
Յէնսի քլըսթըր	"	5	սէնթ
3 քրաւն Լընտըն Էյըր	"	4	սէնթ
2 քրաւն Լընտըն Էյըր	"	4	սէնթ
4 քրաւն քլըսթըր	"	3	և կէս սէնթ
3 քրաւն քլըսթըր	"	3	սէնթ
2 քրաւն քլըսթըր	"	2	և կէս սէնթ
Սլալէս մաքթ. քլըսթըր	"	2	և կէս սէնթ
Սլալէս սըլթանաս	"	2	և երեք չորրորդ սթ.

Քալիֆ. Բէյլին Կրօուըր Ասսօիէշըն
Ա. Լ. ՍԷՅԸՐ, Ատենադպիր

ԳՈՐԾԱԿԱՂՈՒԹԻՒՆԻՔ 'ՔԱՂԱՔԱՅԻ' Ի

— 0 —

Միտըլօրօ, Մասս.	—	—	Պ. Միքայէլեան
Ուայթիւնսփիլ,	'	—	Հ. Նիկողոսեան
Ուէնթ Հոպքըն, Ն.	ձէրզի	—	Հ. Մազուեան
Պրայթըն, Մասս.	—	—	Գ. Վարդանեան
Պօթըն, Մասս.	—	Սիրականեան և Գանիէլեան	
Սէլիմ,	'	—	Ա. Թաշճեան
Սըմիթ, Նիւ ձէրզի	—	—	Ս. Հացագործեան
Հէվրիլ, Մասս.	—	—	Մ. Կարօ
Սէնթըրլ Դօլ, Մասս.	—	—	Նշան Մինասեան

ՍԱՆԹԱ ՖԻ

** ԵՐԿԱՑՈՒՂԻՆԵՐՈՒ ԼԱՒԱԳՈՅՆ ԳԻԾԸ **
Ճամբորդին համար ամեն հանգիստ և դիւրութիւն

Սանթա Ֆի երկաթուղեաց ճամբան լաւագոյնը, կարճ ու ամենէ արագն է՝ արեւելք երթալու կամ արեւեքէ հոս գալու համար:

Ուղղակի շոգենաւային և երկաթուղիի տոմսեր Հին Աշխարհի ամեն կողմերուն և ամեն կողմե- թէն գալու համար: Տոմսի գրամ- ները կրնան հոս վճարուիլ. եթէ տոմսերը չի գործածուին՝ զրամը



ետ կը արուի: Սան Ֆրանսիսկօ երթալու լաւագոյն ճամբան է այս: Տեղեկութիւններ սիրով կը արուին թէ՛ կայարանը և թէ՛ քաղաքիս գրասենեակը՝ ի թիւ 1031 ձէյ փողոց, Ֆրէզնօ: Թ. Ա. ձՕՆՍ, Գրծիլ.

Ս Ա Ն Թ Ա Ֆ Ի
Երկարուղեաց Ընկերութիւն

GEORGE BROS.

ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒ, ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ

ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԳԵՐՁԱԿՆԵՐ.

1109 ՃԷՅ Փողոց, — Ֆիւք Պլաք — Ֆրէզնօ.
Թէլէֆօն — — — Ուայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ ար-
դէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն ապրանք
իրենց տեսակներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ
քիչեր գիտեն թէ իրենց գիները՝ բազրատարար ու-
րիչներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և վստահա-
ցնէք զուք զձեզ այս կարեւոր կէտին համար. անկէ
յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է
ստանալ ճՕՐՃ ԵՂԲԱՅՐՆԵՐԷՆ:

ԹՐԷՅ ԹՈՒՂԹԻ
ԿԱՄ ԹՈՒՂԹ ԹՐԷՅԻ
ՀԱՄԱՐ ԳՆԱ.
Sorushy Pashlianin Lnik.
Ֆրէզնօ և ԱՅ Փողոցներու անկիւնը

Ֆ Ր Է Ջ Ն Օ
ԼԸՄՊԸՐ ՔԸՄԲԸՆԻ
ԳՐԱՍԵՆԵԱԿ ՈՒ ՎԱՃԱՌԱՏ ԵՂԻՆ
ԱՅ և ՎԷՆԹՈՒՐԱ ՓՈՂՈՅՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ
Թէլէֆօն — — — Մէյն 24
ՖՐԷՉՆՕ, ԳԱԼԻՖՕՐՆԻԱ.

ԱԸԹՐԸՆ ՓԸՍԻՖԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Եթէ թուրքիայէն Ամերիկա եկող բարեկամ մը
ունիս, կամ եթէ կը փափաքիս թուրքիա կամ այլ-
ուր երթալ, թիքէթի համար դիմէ Աըթրըն Փըսիֆիք
ընկերութեան օֆիսը: Ամերիկայի ու է մէկ կէտին
համար տոմս կը վաճառէ միևնոյն ընկերութիւնը: Ա-
ւելի տեղեկութեանց համար դիմել առ
Ճ. Ֆ. ՀԻՒՍԸՆ Թ. Ֆ. ՊՐՕՍՆՀԱՆ
Տիվիտըն Փասինճըր Էյճընթ, Սիթի Թիքէթ Էյճընթ
Քաղաքի գրասենեակը—Թիւ 1013 ՃԷՅ Փողոց,
Նոր Փաթըրըն Պլաքին առջև

ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆՔ
Վ. Մ. ՃԱՆՍԸՆ ԵՒ ԸՆԿ.
ԿԱՌՔԵՐՈՒ ՀԱՆԳՍՏԱՐԱՆ
Հարնէս, Մարակ և Ծածկոցներ: Այս գաշտի մէջ
ամենաաժան և ընդարձակ Վաճառատունը
1817—1819 Թուարի փողոց, Փօսթ Օֆիսին դիմացը:

Ճ. Մ. Սերոբեան, Ճ. Պաննըր, Յ. Մ. Սերոբեան
Սան Ռօքիև Վալի Լմևտ Քօ,
Ճ. ՊԱՆՆԸՐ, Վարիչ.
ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Թիւ 954 ԱՅ Փողոց, Ֆրէզնօ, Քալիֆորնիա:
Թէլէֆօն, Մէյն 40

Եթէ կը փափաքիս գնել կամ ծախել մշակուած կամ
անմշակ ամեն տեսակ կալուած՝ եկուր և մեզ տես թէ
ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել
քեզ: Ներկայացուցիչներն ենք շատ մը առաջնակարգ
ապահովագրական ընկերութեանց, որոց համար ձեր
գործերը կը խնդրենք:

DR. GAZARIAN
DENTIST
ՏՔՔ. Յ. Ղազարեան,
ԱՏԱՄՆԱԳՈՐԾ ԵՒ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Չանս Պլաք, ԱՅ Ըսթրիթ, Ֆրէզնօ, Քալ.
Գոհացուցիչ և առաջնակարգ գործ: Կատարեալ գո-
հացում Յաճախորդներուն: Գիները միշտ չափաւոր:
Թէլէֆօն — — — — — Ուայթ 231

ՍԵՐՈՒԲԵԱՆ ԵՂԲԱՐՔ
Ամենաբարձր գին կը վճարեն
ԹՈՒՂԻ, ԴԵՂՁԻ ՈՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ՉՈՐ ՊՏՈՒՂՆԵՐՈՒ:

ՖՐԷՉՆՕ ՄԱՔԱՐՕՆԻ ՖԱՔԹԸՐԻ
*** Ա. ՏԻԱՎԶԶԻՕ — ՏԷՐ ***
Սան Պէնիթօ փողոց, Այի մօտ: Ֆրէզնօ, Քալիֆ.

Ս. Ա. ՇՈՒԱՅԶԸՐ,
ՀԱՐՆԷՍ, ԹԱՄԲ, ՄՏՐԱԿ, ԾԱԾԿՈՅՆԵՐ, ԵՒՆ.
Ամեն տեսակ Նորուգուճներ կըլլան փութով
1920 Մարտիոգա Ըսթրիթ, Ֆրէզնօ:

ՀԻՆԹՐՈԹ - ՊՕՐՏՐՈ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ

Մեծաքանակ վաճառականք Նափայի, Սընծայի ևն. գինիներու, տեղական և ներածեալ օղիներու:

ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՑԻՉ ԷՅՃԷՆԹՆԵՐ

Բիւսթիզի ապահով դեղ ճանչցուած ՈՒԹՐԸՆԻ ՍԷՏԻՍԻՆԼ չուրերուն: — Թէլէֆօն, Ուայթ 817:—

Քասրի Եղբայրներ

Կը ծանուցանեն թէ այս տարի ևս կակնկարին ընդունիլ Հայ այգեպարտներու տրտադրած պտուղներն և՛ կը վստահացնեն թէ ամէն յաճախորդ գոհ պիտի մնայ այս ծանօթ տունէն:

J. K. ELLEZIAN

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Նպարեղէններու, պտուղի, սիկարի, ծխախոտի, թէյի սուրճի, պէյքինի փով տրրի, ձիթալիզի ևն.

1145 ԱՅ փողոց — Ֆրէզնօ — Թէլէֆօն Պլաք 773

Պարհօք Ըսրէյարս,

Էլ և Ֆրէզնօ փողոցներ, Պարաիզին դիմացը Թէլէֆօն, մէյն 174 — — — — Ֆրէզնօ Վարձու կառքեր. ճամբորդներու ձիերուն հոգատար բուծիւն: Գնել և ծախել: Բոլոր գիշերը բայ ենք:

ԳՆԱ ԱՌ

ՊԱՐՐԷԹ ՀԻԲՍ ԸՆԿ.

ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ, ՊՈՂՊԱՏԵԱՅ ԲՆԱԶԵՐՈՒ, ՆԵՐԿԻ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՐԿԱԹԵՂԷՆ

1035-1041 ԱՅ ՓՈՂՈՅ ԹԷԼԷՑՈՆ ԳՐԷՉՆՕ, ՔԱԼ Էքսչէնչ — Թիւ 2

Ձեր Ապահովագրութեան համար դիմեցէք առ

Պ. Ֆ. Շեիկըրտ և ը Ընկ.

1123 ձէՑ Ըսթրիթ

Պահանջները փութով կը վճարուին: Յաճախորդք միշտ գոհացում կստանան:

Ձեր ԱՏԱԽՁՆԵՐԸ ԳՆԵՑԷՔ

Ա. Ա. ՓԻՐՍ

ԱՏԱԽՁԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ: ՓՐԷՉՆՕ ՔԱԼ.

Տըք. Յ. Հ. փարսեղեան

ՖՐԷՉՆՕ ԼՕՆ ԷՆՏ ՍԷՑՎԻՆԿՍ ՊԱՆՔ ՊԻԼՏԻՆԿ ՍԵՆՆԱԿ 16 17, Թէլէֆօն Պլու 492. Ֆրէզնօ Քալ.

Ը Ն Տ Ր Ա Կ Ա Ն Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

Ընտրութիւն. Նոյ. 4, 1902

Փրպլէք Ատմինըսթրէյթ ըրի համար

Բ. Տ. Չիքքընտըն

Ռամկավարական կանոնաւոր ընտրելի:

Հոնրապետական կանոնաւոր ընտրելի

Բ. Ն. Պարսոյ

Քամլեթի Բիքօրալըրի համալ

ԼՏԲԹ. ԱՆՃԼՍ Պ. ՔՕՎԱՆ

ՔՕՐՕՆԸՐԻ ՀՍՄԱՐ

Ռամկավարականներու կանոնաւոր ընտրելի:

Գաւառական Գանձապետի (Քամլեթի Թրէժըրը) համար

Ս. Վ. ՄԱՐՇԸԼԼ

Հասարակապետական կանոնաւոր ընտրելի

ԷՃՕՆՎ. ԿԻԷՐԸԱՐՏ,

Հանրապետական ընտրելի ՇԷՐԻՑԻ համար

Ձեր օգնութիւնը կը խնդրուի յարգանքով:

Ընդհանուր Գատախազի համար

Ճ. Վ. ՃՕՆՍ

Հասարակապետականաց ընտրելին

Թաքս Բօլլեքթըրի համար

Ա. Հ. Կրիլի

Կանոնաւոր Հասարակապետական ընտրելի.

60րդ Երեսփոխանական Նահանգաբաժնէն Երեսփոխանի համար.

Ճ. Օ. Թրէյարս

Կանոնաւոր Հասարակապետական ընտրելի:

Կանոնաւոր Ռամկավարական ընտրելի

Ճ. Վ. Բաւիթի

Երրորդ քաղաքաբաժնի համար (Ֆրէզնօ) արդարութեան դատաւոր (ձըսթիս օֆ տը Փիս):

Երրորդ քաղաքաբաժնի Արդարութեան դատաւորի (ձըսթիս օֆ տը Փիս) համար:

Ճօն Ճօնսէն Որդի

Հանրավարական կանոնաւոր ընտրելի:

Քօրօնըրի համար

Տըք. Վ. Թ. Պարս,

Հասարակապետական կանոնաւոր ընտրելի